Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա

Հեշտ ընթերցվող տարբերակ

Այս կոնվեցիայի հեշտ ընթերցվող տարբերակը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան, և պարտադիր չէ, որ արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Ծրագիրն իրականացվում է «Ագաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ-ի կողմից՝ ի դեմս Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան մատչելի դարձրեց Սյուզաննա Գրիգորյանը:

Սա Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի հեշտ ընթերցվող տարբերակն է:

Կոնվենցիան միջազգային փաստաթուղթ է, որտեղ գրված է, թե ինչ պետք է անեն պետությունները հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների համար:



Հեշտ ընթերցվող տարբերակը իրավական փաստաթուղթ չէ: Այս տարբերակի նպատակն է պարզ ներկայացնել, թե ինչ է գրված այս միջազգային փաստաթղթում:

Դուք պետք է կարդաք ամբողջական տարբերակը, եթե ցանկանում եք իմանալ, թե կոնկրետ ինչ է ասում այս կոնվենցիան կամ ինչ պարտավորություններ ունեն պետությունները:

Նախաբան

Կոնվենցիայի սկզբում նախաբանն է: Այն երկրներին հիշեցնում է մարդու իրավունքների վերաբերյալ այլ միջազգային փաստաթղթեր և հիմնավորում, թե ինչու է այս կոնվենցիան կարևոր: Այս հատվածում գրված չեն երկրների պարտավորությունները: Պարտավորությունները գրված են հիմնական հոդվածներում:

Նախաբանում ասվում է, որ տարբեր ժամանակներում «հաշմանդամություն» ասելով տարբեր բաներ են հասկացել: Հաշմանդամությունն այն է, երբ տարբեր առողջական խնդիրներ ունեցող մարդիկ բախվում են տարբեր խոչընդոտների: Այդ խոչընդոտներն են խանգարում նրանց լիարժեք մասնակցել հասարակական կյանքին:

Հոդված 1 - Նպատակը

Այս կոնվենցիայի նպատակն է ապահովել, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ օգտվեն իրենց մարդու իրավունքներից և ազատություններից այնպես, ինչպես մյուս մարդիկ:

Հոդված 2 - Սահմանումներ



Այս հոդվածում բացատրվում է, թե ինչ են նշանակում օգտագործվող տարբեր բառերը:

Լեզու - Սա ներառում է ինչպես բանավոր լեզուները, այնպես էլ ժեստերի լեզուները:



Խտրականություն - Նշանակում է անարդար վերաբերմունքի արժանանալ, քանի որ մարդն ունի հաշմանդամություն:



Խելամիտ հարմարեցում - Նշանակում է կոնկրետ անձի համար միջավայրը հարմարեցնել այնպես, որ նա մյուսների պես կարողանա օգտվել իր իրավունքներից:

Հոդված 3 - Կոնվենցիայի սկզբունքները

Մարդիկ ունեն իրենց կյանքի վերաբերյալ որոշում կայացնելու իրավունք:

խտրականություն

Ոչ ոք չպետք է ենթարկվի խտրականության:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ հանրային կյանքին մասնակցելու նույն իրավունքներն ունեն, ինչ բոլորը:

Պետք է ընդունել հաշմանդամություն ունեցող անձանց այնպիսին, ինչպիսին նրանք կան:

Բոլորը պետք է ունենան հավասար հնարավորություններ:



Ամեն ինչ պետք է բոլորին մատչելի լինի:

Տղամարդիկ և կանայք պետք է ունենան հավասար հնարավորություններ:

Հաշմանդամություն ունեցող երեխաներին պետք է ընդունել այնպիսին, ինչպիսին նրանք կան:

Հոդված 4 - Ընդհանուր պարտականություններ

Բոլոր երկրները պարտավոր են ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձանց բոլոր իրավունքները լիարժեք իրականացվեն:

Երկրները պետք է ամեն ինչ անեն այս կոնվենցիան իրականություն դարձնելու համար:

Երկրները պետք է ընդունեն նոր օրենքներ, իսկ խտրական օրենքները ուժը կորցրած ճանաչեն:

Պետք է ընդունել տարբեր փաստաթղթեր և ծրագրեր հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքների համար:

Երկրները չպետք է անեն բաներ, որոնք դեմ են այս կոնվենցիային:

խտրականություն

Երկրները պետք է անեն ամեն ինչ, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ խտրականության չենթարկվեն նաև մասնավոր ընկերությունների կողմից:

Երկրները պետք է ապահովեն, որ ամեն ինչ ստեղծվի բոլորի համար հարմար ձևով:

Երկրները պետք է աջակցեն նոր տեխնոլոգիաների ստեղծմանը, որոնք կօգնեն հաշմանդամություն ունեցող մարդկանց:



Երկրները պետք է իրազեկեն հաշմանդամություն ունեցող անձանց այն ամենի մասին, ինչը կօգնի նրանց:

Երկրները պետք է իրազեկեն հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող մարդկանց մարդու իրավունքների մասին:

Բոլոր երկրները խոստանում են անել այնքան, որքան կարող են իրենց թույլ տալ, որպեսզի հաշմանդամություն ունեցող մարդիկ կարողանան օգտվել ծառայություններից:

Բոլոր երկրները պետք է ներառեն հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց կազմակերպություններին նոր օրենքներ մշակելիս:

Հոդված 5 - Հավասարություն և խտրականության բացառում

խտրականություն

Երկրները համաձայն են, որ օրենքի առջև բոլորը հավասար են: Հաշմանդամություն ունեցող մարդկանց նկատմամբ խտրականություն չի թույլատրվում:

Երկրները պետք է անեն ամեն ինչ հաշմանդամություն ունեցող մարդկանց խտրականությունից պաշտպանելու համար:



Հավասարության համար հաշմանդամություն ունեցող մարդկանց պետք է տրամադրել խելամիտ հարմարեցումներ:

Հոդված 6 - Հաշմանդամություն ունեցող կանայք

Երկրները համաձայն են, որ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները հաճախ են խտրականության ենթարկվում:

Երկրները պետք է անեն ամեն ինչ, որպեսզի հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները ունենան լիարժեք և ազատ կյանք:

Հոդված 7 - Հաշմանդամություն ունեցող երեխաներ

Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն նույն իրավունքները, ինչ մյուս երեխաները:



Հաշմանդամություն ունեցող երեխաների մասին որոշում կայացնելիս առաջնահերթ պետք է մտածել, թե ինչն է լավ նրանց համար:

Հաշմանդամություն ունեցող երեխաներն իրավունք ունեն ասելու իրենց կարծիքը իրենց վերաբերող հարցերի մասին:

Երկրները պետք է աջակցեն երեխաներին, որպեսզի նրանք կարողանան ասել այն ինչ մտածում են:

Հոդված 8 - Իրազեկումը

Երկրները պետք է անեն ամեն ինչ, որ բոլորը տեղյակ լինեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն նույն իրավունքները, ինչ մյուսները: Երկրները պետք է պատմեն, թե ինչ կարողություններ ունեն հաշմանդամություն ունեցող մարդիկ՝ կոտրելով կարծրատիպերը:

Բոլոր երեխաները պետք է սովորեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն հավասար իրավունքներ:

Երկրները պետք է աջակցեն լրատվամիջոցներին, որպեսզի նրանք ևս բարձրացնեն հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ իրազեկվածությունը:

Հոդված 9 - Մատչելիություն



Երկրները պետք է այնպես անեն, որ ամեն ինչ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար մատչելի լինի, ինչպես մյուսներին: Երկրները պետք է բացահայտեն բոլոր խոչընդոտները և վերացնեն:

Պետք է ապահովել շենքերի, ճանապարհների, տրանսպորտի մատչելիությունը հաշմանդամություն ունեցող անձանց համար:



Տեղեկատվությունը ևս պետք է մատչելի լինի:

Երկրները պետք է ունենան մատչելիության պահանջներ և մշակեն ուղեցույցներ, թե ինչպես ապահովել մատչելիություն:

Մասնավոր ընկերություններն իրենց ծառայությունները պետք է մատչելի դարձնեն:



Երկրները պետք է կազմակերպեն դասընթացներ մատչելիության խնդիրների և լուծումների մասին:

Շենքերում պետք է լինեն հեշտ հասկանալի և բրայլյան ցուցանակներ:

Տարբեր ծառայություններից օգտվելու համար հաշմանդամություն ունեցող մարդկանց պետք է տրամադրել ուղեկցող, ժեստերի լեզվի թարգմանիչ և այլն:

Ինտերնետից օգտվելը ևս պետք է հարմար լինի հաշմանդամություն ունեցող մարդկանց:

Նոր սարքավորումները պետք է մատչելի արտադրվեն:

Հոդված 10 - Կյանքի իրավունք

Բոլոր մարդիկ կյանքի իրավունք ունեն:

Երկրները պետք է այնպես անեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան իրենց կյանքն ապրելու հնարավորություն, ինչպես մյուսները:

Հոդված 11 - Արտակարգ իրավիճակներ

Երկրները պետք է պաշտպանեն հաշմանդամություն ունեցող անձանց արտակարգ իրավիճակներում:

Հաշանդամություն ունեցող անձանց պետք է պաշտպանել պատերազմների, համավարակների, երկրաշարժների ժամանակ:

Հոդված 12 - Օրենքի առաջ հավասարությունը

Հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն օրենքի առաջ հավասար պաշտպանության իրավունք:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ որոշում կայացնելու իրավունք ունեն ինչպես մյուսները:

Երկրները պետք է աջակցեն հաշմանդամություն ունեցող մարդկանց իրենց որոշումները կայացնելիս:

Եթե հաշմանդամություն ունեցող մարդուն իսկապես պետք է, որ մեկ ուրիշը խոսի իր փոխարեն, պետք է կանոններ լինեն, որ նա հարգի այդ մարդու որոշումները:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք ունեն՝

- սեփականացնել իրենց գույքը կամ ժառանգություն տալ.
- տնօրինել սեփական գումարները.
- բանկից վարկ վերցնել:

Չի թույլատրվում հաշմանդամություն ունեցող մարդկանց զրկել իրենց սեփականությունից իրենց հաշմանդամության պատճառով:

Հոդված 13 - Արդարության հասնելը

Հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն դատարան դիմելու իրավունք: Նրանց իրավունքները պետք է հարգվեն նաև, երբ, օրինակ, նրանք վկա են:

Հաշմանդամություն ունեցող մարդկանց պետք է աջակցել դատական բոլոր փուլերում:

Երկրները պետք է վերապատրաստեն դատարանների, ոստիկանության և բանտերի աշխատողներին:

Հոդված 14 - Ազատ և ապահով լինելը

Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է լինեն ազատ և ապահով ինչպես մյուսները:

Հաշմանդամություն ունեցող մարդկանց չի թույլատրվում փակի տակ պահել իրենց հաշմանդամության պատճառով: Նրանք կարող են ազատությունից զրկվել միայն այնպես, ինչպես հաշմանդամություն չունեցող մարդիկ:

Ազատությունից զրկված հաշմանդամություն ունեցող մարդկանց իրավունքները ևս պետք է հարգել:

Հոդված 15 - Խոշտանգումներից կամ դաժան վերաբերմունքից ազատություն

Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան վերաբերմունքի:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ չպետք է առանց իրենց համաձայնության ենթարկվեն բժշկական փորձերի:

Երկրները պետք է ամեն ինչ անեն, որպեսզի հաշմանդամություն ունեցող մարդիկ չենթարկվեն վատ վերաբերմունքի:

Հոդված 16 - Բռնությունից և շահագործումից ազատություն

Երկրները պետք է օրենքներ ընդունեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ պաշտպանված լինեն բռնությունից ինչպես տանը, այնպես էլ դրսում:

Երկրները պետք է կանխեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ չենթարկվեն չարաշահումների:



Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է ունենան նաև չարաշահումներից պաշտպանության մասին սովորելու հնարավորություն:

Երկրները պետք է այնպես անեն, որ բռնության ենթարկված հաշմանդամություն ունեցող մարդիկ ստանան առողջապահական և այլ ծառայություններ բռնությունից հետո վերականգնվելու համար:

Երկրները պետք է համոզվեն, որ իրենք լավ միջոցներ ունեն բռնությունները բացահայտելու և մեղավորներին պատժելու համար:

Երկրները պետք է հոգ տանեն, որ հաշմանդամություն ունեցող կանայք և երեխաները ևս չենթարկվեն բռնությունների:

Հոդված 17 - Անձի անձեռնմխելիություն

Հաշմանդամություն ունեցող մարդկանց միտքն ու մարմինը իրենցն են և դա պետք է հարգել, ինչպես մյուս մարդկանց դեպքում:

Հոդված 18 - Տեղաշարժվելու ազատություն և քաղաքացիություն

Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք ունեն ընտրելու իրենց ապրելու վայրը և քաղաքացիությունը, ինչպես մյուսները:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ կարող են դառնալ որևէ երկրի քաղաքացի, փոխել քաղաքացիությունը, հրաժարվել դրանից:

Ոչ ոք չպետք է զրկվի իր քաղաքացիությունից կամ անձնագիր ունենալու իրավունքից իր հաշմանդամության պատճառով:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք ունեն հեռանալու ցանկացած երկրից:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է կարողանան վերադառնալ իրենց հայրենիք:

Հաշմանդամություն ունեցող երեխաները պետք է գրանցվեն ծնվելուց անմիջապես հետո: Նրանք պետք է ունենան անուն, ազգանուն և ունենան իրենց ծնողներին ճանաչելու իրավունք:

Հոդված 19 - Անկախ կյանքի և համայնքում ներառվելու իրավունք

Հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն համայնքում ապրելու նույն իրավունքը, ինչպես մյուսները:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է հնարավորություն ունենան ընտրելու՝ որտեղ և ում հետ ապրել:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ չպետք է ստիպված լինեն ապրելու խնամքի հաստատություններում:

Հաշմանդամություն ունեցող անձինք պետք է ստանան տարբեր տեսակի ծառայություններ, որոնք կօգնեն չմեկուսանալ համայնքից: Այդ ծառայություններից է նաև անձնական օգնականը:

Համայնքի մյուս բնակիչների համար ծառայությունները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող մարդկանց:

Հոդված 20 - Տեղաշարժվելու իրավունք

Երկրները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ կարողանան ազատորեն տեղաշարժվել:



Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է կարողանան տեղաշարժվել իրենց ուզած ձևով և երբ ցանկանում են, և դա անել իրենց հասանելի գնով:

Երկրները պետք է հաշմադնամություն ունեցող մարդկանց մատչելի գնով, տրամադրեն աջակցող սարքեր կամ անձնական օգնական:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ և նրանց հետ աշխատող մարդիկ պետք է վերապատրաստվեն տեղաշարժվելու հմտությունների վերաբերյալ:

Աջակցող սարքեր արտադրող ընկերությունները պետք է հաշվի առնեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքները:

Հոդված 21 - Խոսքի ազատություն և տեղեկատվության մատչելիություն

Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք ունեն ասելու այն, ինչ մտածում են և կիսվելու իրենց գաղափարներով, ինչպես մյուսները:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք ունեն փնտրելու, ստանալու և տարածելու իրենց գաղափարները ինչպես մյուսները:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ մյուսների պես պետք է ստանան մատչելի տեղեկություններ ճիշտ ժամանակին և անվճար:

Երկրները պետք է ճանաչեն ժեստերի լեզուն այնպես, ինչպես բանավոր և գրավոր լեզուները:



Երկրները պետք է պահանջեն մասնավոր ընկերություններից հաշմանդամություն ունեցող անձանց տեղեկություն տրամադրել և ծառայություններ մատուցել նրանց համար մատչելի ձևով:

Լրատվամիջոցները պետք է իրենց նորությունները մատչելի ձևով հրապարակեն:

Հոդված 22 - Անձնական կյանքի նկատմամբ հարգանքը



Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն անձնական կյանքի իրավունք ինչպես մյուսները: Օրինակ՝ դա նշանակում է, որ ոչ ոք չի կարող հրապարակել հաշմանդամություն ունեցող մարդկանց նամակագրությունները:

Երկրները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող մարդկանց անձնական տվյալները պահվեն գաղտնի:

Հոդված 23 - Հարգանք տան և ընտանիքի նկատմամբ

Հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք, ինչպես մյուսները:



Երկրները պետք է ընդունեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն իրենց համաձայնությամբ ամուսնանալու իրավունք:



Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք ունեն որոշելու, թե երբ և քանի երեխա ունենան:

Երկրները պետք է պաշտպանեն հաշմանդամություն ունեցող մարդկանց մայր կամ հայր դառնալու իրավունքը:

Երկրները պետք է աջակցեն հաշմանդամություն ունեցող մարդկանց իրենց երեխաներին մեծացնելու հարցում:

Հաշմանդամություն ունեցող երեխաներն ունեն ընտանիքում մեծանալու իրավունք: Երկրները պետք է կանխեն, որ մարդիկ չլքեն իրենց հաշմանդամություն ունեցող երեխաներին կամ թաքցնեն նրանց:

Երեխաները չպետք է բաժանվեն իրենց ծնողներից ծնողի կամ երեխայի հաշմանդամության պատճառով:

Եթե հաշմանդամություն ունեցող երեխայի ընտանիքը չի խնամում երեխային, երկրները պետք է նրանց խնամքը կազմակերպեն այլ ընտանիքում:

Հոդված 24 - Կրթություն

Հաշմանդամություն ունեցող մարդիկ ունեն կրթության իրավունք, ինչպես մյուսները:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է կարողանան բոլորի պես մանկապարտեզ, դպրոց, քոլեջ կամ համալսարան գնալ:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ չպետք է մեկուսացվեն ընդհանուր կրթական համակարգից:

Հաշմանդամություն ունեցող երեխաները մյուսների նման պետք է դպրոց գնալու համար չվճարեն:

Կրթությունը պետք է մատչելի լինի հաշմանդամություն ունեցող մարդկանց համար:

Եթե մարդն ունի առանձնահատուկ կարիքներ, պետք է տրամադրվեն խելամիտ հարմարեցումներ:

Երկրները պետք է հաշմանդամություն ունեցող անձանց հնարավորություն տան սովորելու կյանքի համար անհրաժեշտ հմտությունները:

Երկրները պետք է կույր մարդկանց կրթությունը կազմակերպեն իրենց հարմար ձևերով: Օրինակ՝ երեխաները ունենան բրայլյան համակարգով սովորելու հնարավորություն:

Երկրները պետք է խուլ երեխաների կրթություն տրամադրեն նաև ժեստերի լեզվով:

Մարդիկ, միաժամանակ և՛ չեն լսում, և՛ չեն տեսնում պետք է ևս կրթություն ստանան իրենց հարմար ձևերով:



Երկրները պետք է հզորացնեն մասնագետների կարողությունները որակյալ կրթություն տրամադրելու նպատակով:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է կարողանան նաև շարունակել իրենց կրթությունը ամբողջ կյանքի ընթացքում:

Հոդված 25 - Առողջապահություն

Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն առողջության իրավունք ինչպես մյուսները:

Երկրները պետք է հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրեն որակյալ և անվճար կամ մատչելի գնով առողջապահական ծառայություններ:

Երկրները պետք է տրամադրեն նաև առողջապահական ծառայություններ, որոնք մարդկանց պետք են իրենց հաշմանդամությամբ պայմանավորված:

Առողջապահական ծառայությունները պետք է հնարավորինս մոտ լինեն մարդուն, այդ թվում՝ գյուղերում:

Բժիշկները պետք է հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրեն նույն որակի ծառայություններ, ինչ մյուսներին:



Առողջության ու կյանքի ապահովագրությունը չպետք է խտրական լինի:

Երկրները պետք է համոզվեն, որ մարդիկ չեն մերժվում բժշկական օգնությունից, քանի որ հաշմանդամություն ունեն:

Հոդված 26 - Վերականգնում

Երկրները պետք է օգնեն հաշմանդամություն ունեցող անձանց լինել հնարավորինս անկախ, օգտագործել իրենց ֆիզիկական, մտավոր և մասնագիտական կարողությունները:

Երկրները պետք է տրամադրեն բժշկական և վերականգնողական ծառայությունները հնարավորինս շուտ: Այդ ծառայությունները պետք է նաև մոտ լինեն հաշմանդամություն ունեցող մարդկանց:

Երկրները պետք է վերապատրաստեն վերականգնողաբաններին, որպեսզի նրանք ավելի որակյալ ծառայություններ տրամադրեն:

Երկրները պետք է տարբեր վերականգողական սարքավորումներ տրամադրեն հաշմանդամություն ունեցող անձանց:

Հոդված 27 - Աշխատանք և զբաղվածություն

Հաշմանդամություն ունեցող մարդիկ աշխատելու իրավունք ունեն:

Երկրները պետք է համոզվեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք կարող են օգտվել այս իրավունքից:

խտրականություն

Երկրները պետք է արգելեն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ խտրականությունը աշխատանք գտնելիս և աշխատելիս:

Երկրները պետք է համոզվեն, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ ազատ են միանալու աշխատողների միությանը (արհմիությանը), ինչպես մյուս մարդիկ:

Երկրները պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան հավասար աշխատանքային պայմաններ, օրինակ՝ հավասար վարձատրվեն նույն տեսակի աշխատանք կատարելու համար:

Երկրները պետք է աջակցեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք աշխատանք գտնեն, փորձ ձեռք բերեն, վերապատրաստվեն, ստեղծեն սեփական բիզնեսը:

Երկրները պետք է աշխատանքի ընդունեն հաշմանդամություն ունեցող անձանց պետական մարմիններում:

Երկրները պետք է տրամադրեն խելամիտ հարմարեցումներ հաշմանդամություն ունեցող աշխատողներին:

Երկրները պետք է պաշտպանեն հաշմանդամություն ունեցող անձանց, որպեսզի նրանք չենթարկվեն հարկադիր աշխատանքի, ստրկության:

Հոդված 28 - Սոցիալական պաշտպանություն

Հաշմանդամություն ունեցող մարդիկ և նրանց ընտանիքները ունեն բավարար ապրելու պայմանների իրավունք: Դրանք են սննդի, հագուստի, բնակարանի և մաքուր ջրի իրավունքները:

Հաշմանդամություն ունեցող անձինք ունեն սոցիալական պաշտպանության իրավունք:

Երկրները պետք է հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ ծառայություններ և աջակցող սարքեր տրամադրեն:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ (հատկապես կանայք, աղջիկներն ու տարեցները) պետք է կարողանան աղքատության հաղթահարման ծրագրերից օգտվել:

Երկրները պետք է աջակցեն հոգալ հաշմանդամությամբ պայմանավորված ծախսերը:

Պետք է լինեն բնակարանով ապահովելու պետական ծրագրեր:

Հոդված 29 - Մասնակցություն քաղաքական և հասարակական կյանքին

Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք ունեն մասնակցելու քաղաքականությանը և հասարակական կյանքին ինչպես բոլորը:

Հաշմանդամություն ունեցող բոլոր մարդիկ ընտրելու իրավունք ունեն:

Նրանք իրավուք ունեն նաև ընտրվելու տարբեր պաշտոններում:

Երկրները պետք է ընտրություններն անցկացնեն այնպես, որ բոլորին մատչելի լինի:



Հաշմանդամություն ունեցող անձանց ընտրությունը ևս պետք է գաղտնի լինի:



Պետք է թույլ տալ, որ հաշմանդամություն ունեցող անձինք ընտրության ժամանակ օգնություն ստանան իրենց ցանկացած անձից, եթե դրա կարիքն ունեն:

Հաշմանդամություն ունեցող անձինք պետք է կարողանան նաև ստեղծել և ղեկավարել կազմակերպություններ:

Երկրները պետք է նպաստեն, որ հաշմանդամություն ունեցող անձինք ակտիվ ներգրավվեն հասարակական կազմակերպություններում և կուսակցություններում:

Հոդված 30 - Մասնակցություն մշակութային կյանքին, հանգստին, ժամանցին և սպորտին

Հաշմանդամություն ունեցող մարդիկ իրավունք ունեն մասնակցելու մշակութային կյանքին, ժամանցը կազմակերպել և սպորտով զբաղվել ինչպես բոլորը:



Երկրները պետք է համոզվեն, որ, օրինակ, գրքերը մատչելի են:

Հեռուստահաղորդումները, ֆիլմերը և թատրոնները պետք է մատչելի լինեն:



Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է կարողանան գնալ թատրոն, թանգարան, կինոթատրոն, գրադարան և այլ վայրեր:

Հաշմանդամություն ունեցող մարդիկ պետք է հնարավորություն ունենան նաև զբաղվելու արվեստով:

Խուլ մարդկանց մշակույթը և ժեստերի լեզուն պետք է հարգված լինեն:

Երկրները պետք է աջակցեն հաշմանդամություն ունեցող անձանց, որպեսզի նրանք մյուսների պես մասնակցեն սպորտային կյանքին:

Սպորտային և զբոսաշրջության վայրերը ևս պետք է մատչելի լինեն:

Հաշմանդամություն ունեցող երեխաները նույնպես պետք է կարողանան մասնակցել սպորտային կյանքին, այդ թվում՝ դպրոցում:

Հոդված 31 - Վիճակագրություն

Երկրները պետք է մանրամասն վիճակագրություն հավաքեն հաշմանդամություն ունեցող անձանց մասին: Վիճակագրությունը պետք է օգտագործեն հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներն ավելի լավ հասկանալու ու նոր ծառայություններ ստեղծելու համար:

Հոդված 32 - Միջազգային համագործակցություն

Երկրները պետք է աշխատեն միասին, որպեսզի Կոնվենցիան գործնականում կիրառվի բոլոր երկրներում:

Միջազգային ծրագրերը պետք է ներառական լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Երկրները պետք է օգնեն միմյանց, օրինակ՝ կիսվեն լավ փորձերով, ֆինանսապես աջակցեն միմյանց և այլն:

Հոդված 33 - Այս կոնվենցիայի իրականացումը

Երկրների կառավարությունները պետք է նշանակեն մեկ պետական մարմնի, որը պետք է պատասխանատու լինի կոնվենցիան իրականություն դարձնելու համար:



Երկրները պետք է ներառեն հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց կազմակերպություններին, որպեսզի նրանք վերահսկեն:

Հոդված 34 - Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե

Ստեղծվում է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտե:

Դա 18 մարդուց կազմված խումբ է, որը գտնվում է Միավորված ազգերի կազմակերպությունում՝ ՄԱԿ-ում:



Կոմիտեի անդամները ընտրվում են երկրների կողմից: Նրանց օգտին քվեարկում են գաղտնի:



Կոմիտեի անդամներն աշխատում են չորս տարի ժամկետով: Դրանից հետո նրանք կարող են ևս մեկ անգամ ընտրվել:

Հոդված 35 - Երկրների հաշվետվությունները

Յուրաքանչյուր երկիր հաշվետվություն է ուղարկում Կոմիտեին այն մասին, թե ինչպես են առաջ գնում գործերը:



Առաջին անգամ հաշվետվությունը ուղարկվում է Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում:

Հոդված 36 - Հաշվետվությունների ուսումնասիրումը

Կոմիտեն ուսումնասիրում է հաշվետվությունները և երկրներին խորհուրդներ տալիս, թե ինչ է պետք անել: Կոմիտեն կարող է նաև ավելի շատ տեղեկություններ պահանջել:

Բոլոր երկրները կարողանում են տեսնել բոլոր հաշվետվությունները:

Հոդված 37 - Երկրների և կոմիտեի համագործակցություն

Երկրները պետք է համագործակցեն կոմիտեի հետ, որպեսզի կոմիտեն կարողանա իր աշխատանքը կատարել:

Կոմիտեն նաև օգնում է երկրներին Կոնվենցիան գործնականում իրականացնելու հարցում:

Հոդված 38 - Կոմիտեի աշխատանքը այլ կազմակերպությունների հետ

Կոմիտեն կարող է խնդրել տարբեր կազմակերպությունների մասնագիտական կարծիք տալ տարբեր հարցերի վերաբերյալ:

Կոմիտեն կարող է Միավորված ազգերի կազմակերպության՝ ՄԱԿ-ի տարբեր կազմակերպություններին խնդրել հաշվետվություններ տալ իրենց աշխատանքի վերաբերյալ:

Հոդված 39 - Կոմիտեի հաշվետվությունը

Կոմիտեն ամեն երկու տարին մեկ հաշվետվություն է ներկայացնում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեային և Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական խորհրդին:

Հոդված 40 - Երկրների ժողովը

Երկրները երկու տարին մեկ հանդիպում են, որպեսզի քննարկեն կոնվենցիայի հետ կապված ցանկացած հարց:

Հոդված 41 - Փաստաթղթերի պահպանում

Ցանկացած փաստաթուղթ, որը երկրները ներկայացնում են, պետք է ուղարկվեն Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Հոդված 42 - Ստորագրում

Երկրները կարող են ստորագրել Կոնվենցիան Նյու Յորքում գտնվող Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակում 2007 թվականի մարտի 30-ից:

Հոդված 43 - Պարտադիր լինելու վերաբերյալ համաձայնություն տալը

Այն երկրները, որոնք ստորագրել են այս կոնվենցիան, կարող են վավերացնել: Դա կնշանակի, որ կոնվենցիան գործնականում սկսում է իրականացվել այդ երկրում:

Հոդված 44 - Տարածաշրջանային կազմակերպությունները

Որոշ երկրներ միավորված են տարածաշրջանային կազմակերպություններում, ինչպիսին Եվրոպական միությունն է:

Այս կազմակերպությունները նույնպես կարող են միանալ կոնվենցիային:

= «ԵՐԿԻՐ»

Երբ կոնվենցիայի տեքստում ասում է «երկրներ», նկատի ունի նաև այս կազմակերպությունները:

Հոդված 45 - Ուժի մեջ մտնելը



Կոնվենցիան ուժի մեջ է մտնում, 20 երկրի միանալուց 30 օր հետո:

[Երբ Կոնվենցիան «ուժի մեջ է մտնում», նշանակում է, որ երկրները կարող են պատասխանատվություն կրել, եթե չիրականացնեն պարտավորությունները]:

Հոդված 46 - Վերապահումները

Երկրները կարող են վերապահումներ ունենալ: Սա նշանակում է, որ նրանք կարող են ասել, որ չեն կարողանա գործնականում կիրառել Կոնվենցիայի որոշակի դրույթներ: Վերապահումները չեն կարող լինել, եթե դրանք դեմ են Կոնվենցիայի նպատակին:

Երկրները կարող են ցանկացած պահի հետ վերցնել վերապահումը:

Հոդված 47 - Փոփոխությունները

Ցանկացած երկիր կարող է խնդրել փոփոխություններ կատարել կոնվենցիայում: Նրանք կարող են դրա մասին գրել Գլխավոր քարտուղարին, ով կասի մյուս Երկրներին:

Փոփոխությունները կկատարվեն, եթե երկրները որոշեն քննարկել և փոփոխություններ անել:

Հոդված 48 - Չեղյալ հայտարարելը

Երկիրը կարող է «դուրս գալ» Կոնվենցիայից՝ գրելով Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:

Երկիրն այլևս պարտավոր չի լինի Կոնվենցիան գործնականում կիրառել Գլխավոր քարտուղարին գրավոր նամակ գրելուց մեկ տարի անց:

Հոդված 49 - Մատչելի տարբերակներ

Կոնվենցիայի տեքստը պետք է մատչելի դառնա տարբեր ձևերով, որպեսզի հաշմանամություն ունեցող բոլոր մարդիկ կարողանան կարդալ այն:

Հոդված 50 - Կոնվենցիան այլ լեզուներով

Կոնվենցիան ունի արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և իսպաներեն լեզուներով տարբերակներ: